

ՉԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԳԵՐՃՆՇՄԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂԵԿԱԳՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՒԺՈՒՄՆ ՈՒ ՀՍԿՈՒՄԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Չելվեյան Պ.Հ.^{1,2}, Պողոսյան Գ.Ա.²

¹ Լ. Ա. Հովհաննիսյանի անվ. սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ, Երևան, Հայաստան

² Կանխարգելիչ սրտաբանության կենտրոն, Երևան, Հայաստան

Ողջ աշխարհում զարկերակային գերճնշումը (ԶԳ) հանդիսանում է սիրտ-անոթային հիվանդացության և մահացության հիմնական և կարևորագույն պատճառ: Ներկայումս մեծ տեղ է հատկացվում զարկերակային գերճնշման ախտորոշման, բուժման, լիարժեք կարգավորման և հսկման, ինչպես նաև՝ կանխարգելման գործընթացում հիվանդության վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը, ինչը հանդիսանում է պացիենտի վրա հիմնված ռազմավարության (patient based strategy) իրագործման կարևոր պայման: Ներկայացված աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում իրականացված զարկերակային գերճնշման տարածվածությանը, հիվանդների տեղեկացվածությանը, բուժման և հսկման արդյունավետությանը վերաբերյալ առաջին սերինինգային հետազոտությունն է:

Նպատակը

Հետազոտության հիմնական նպատակն է՝ պացիենտներին տալ զարկերակային գերճնշման վերաբերյալ իմացություն և տեղեկացվածություն, որպես արդյունավետ հսկման վճռորոշ գործոնների ուսումնասիրություն:

Մեթոդները և արդյունքները

Արյան ճնշման բաշխվածությունը (համաձայն ESH/ESC 2003 թ. դասակարգման) և զարկերակային գերճնշման հիվանդների առողջական վիճակի վերաբերյալ իմացությունը գնահատելու նպատակով, հեղինակները հետազոտել են Երևան քաղաքի պատահականության սկզբունքով ընտրված 18-90 տարեկան 748 բնակչի: Համապատասխան հարցաթերթերում ներառվել են նաև զարկերակային ճնշման չափման տվյալները (չափումները կատարվել են համաձայն ESH ուղեցույցի): Ընդհանուր առմամբ 205 (27,4%) հետազոտված դասակարգվել են որպես զարկերակային գերճնշման հիվանդներ (զարկերակային ճնշումը $\geq 140/90$ մմ ս.ս. կամ հակագերճնշումային բուժման առկայություն), որոնցից 37-ն (4,9%) ունեցել են մեկուսացված սիստոլիկ գերճնշում: Չարկերակային գերճնշում ունեցողներից միայն 125-ն (61,0%) են իրենց զարկերակային ճնշումը գնահատել «բարձր», որոնցից 80-ը (64,0%) հետազոտման պահին ստացել են հակագերճնշումային բուժում (բոլոր գերճնշում ունեցողների 39,0%-ը), իսկ հակագերճնշումային բուժում ստացողներից միայն 18-ին (22,5%) է հաջողվել կարգավորել զարկերակային ճնշումը (բոլոր գերճնշում ունեցողների 8,8%-ը): Համաձայն արդյունքների, 18-ից 41 տարեկան տղամարդկանց (տեղեկացվածության և բուժման ցածր մակարդակ), ինչպես նաև 41 տարեկանից բարձր տղամարդկանց (հսկման ցածր մակարդակ) և կանանց (բուժման ցածր մակարդակ) ենթախմբերը կարելի է դիտարկել որպես բարձր ռիսկային:

Եզրակացություն

Երևան քաղաքի բնակչության շրջանում զարկերակային գերճնշման տարածվածությունը բարձր է, իսկ տեղեկացվածությունը՝ ցածր: Անհրաժեշտ են միջոցառումներ՝ տեղեկացվածության բարձրացման և զարկերակային գերճնշման հսկման բարելավման ուղղությամբ: